

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԿՐՈՒԹՅՈՒՆ  
 Վոչխարիոյ համար 10  
 Տարեկան 10  
 Վեցամսեայ 5  
 Արշասանիմանի համար 12  
 Վեցամսեայ 6  
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 —(—)  
 Կրտսիւնի և 5 և 5 տարեկան  
 —(—)  
 Ծանուցման տողը 20 սան-  
 քիւն է. երեկոն աւելի ան-  
 գամներու համար 20 Օլօ  
 գնոյ կը լրացայ :

# ՇԱՆՏՈՒՄ

R. P. Kalémkarian  
 (Autri-he)  
 Melchtharistangasse W. 4  
 Vienne

Նամակ եւ դրամ դրկեյ  
 Հրագրութեան հասցիին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varна (Bulgarie)

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆՍՈՒ Յ՝ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

### ՄԵՐ ԿՐՕՆԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Երբ մէկ կողմէ կը լսենք Հայաստանի զանազան դաւաճանքներէն եկած չքաւորութեան, հարստահարութեան անվերջ տառապանքի աղեքարչ ողբ ու կոծը, և երբ միւս կողմէ կը տեսնենք որ մեր կղերականները արհամարհելով միակ յոյսը իր հոգեւորականին վրայ դրած մշտաշարժար ժողովրդի մը հրատարակ, անխղճօրէն կը մերժեն մեկնել դէպի գաւառ, լակ Վոստորի մեղկ կեանքէն չի զրկուելու համար, շատ տխուր մտածումներ մեր միտքը կը պաշարեն, ու չենք կրնար զուտանքով չի վերաբերուիլ մեր հոգեւորական դասակարգին :

Հայրենիքի վերջին ազէտալի օրերուն մէջ՝ ամէն անգամէ աւելի երեւան եկաւ այն տխուր իրականութիւնը թէ մեր կրօնականները, այսօր, կեցած չեն իրենց դիրքի այն բարձրութեան վրայ, զոր իրենց նախորդները կտակած էին անոնց :

Դարեր առաջ, երբ սակաւին մեր հայրենիքը ազատ, բայց անթիւ արիւնհարու թշնամիներու վճռակէտով շրջապատուած էր, հայ կղերականը պատրաստ էր ամէն առթիւ յոյս տալու թէ՛ ան իր կրօնքին չափ կը սիրէր նաեւ հայրենիքի անկախութիւնը, աւետարանին չափ ազատութեան պատճառի գորշակը : Այն ատենուան ամենէն շեքմեռանդ եպիսկոպոսները ամենէն յանդուգն շինուորականներն էին և իրենց ազօրքի քաղցր մրմունջներուն կը խառնէին սուրբու և նիզակներու շառաչիւնը : Սաղմոսերգութեան հետ միասին կը մշապէին նաեւ գաղտնի գործածելու, թունալից նետեր սրձակելու արուեստը, և Աստուծոյ խօսքին ամենէն մեղրաբան քաղցրահամը, հայրենիքին ամենէն կատաղի կուռուցներն էին :

Սակայն անկէ ի վեր դարեր անցան, երկայն դարեր, ապառաժներու զաւակ, զիցազն հայ ժողովուրդը ինկաւ իր փառահեղ սարերու բարձրութենէն, գերի,

ստրուկ դարձաւ ան : Ինկաւ, որ կեցաւ նաեւ հայերու առաջատական կղերականութիւնը, սոգէտ ժողովուրդին չափ, անկէ աւելի վար :

Եւ մենք այդ բանը թէեւ չատենց զիտէինք, սակայն վերջին անգամ երբ հայրենիքը հուրի և աւարի մատնուած, արեան և մութիւրի կոյտ մը դարձաւ, պահ մը սիրեցինք հաւատալ թէ՛ պիտի գտնուէին այնպիսի բարձրաստիճան կրօնականներ, որոնք պատրաստ պիտի ըլլային գոնէ իրենց ժողովրդական ազգեցութիւնը գործածելով կուռելու բռնակալութեան դէմ :

Սակայն ափսոս, փորձը անգամ մըն ալ եկաւ ջոյց տալ թէ հայ հոգեւորականը այլեւս չէր Քրիստոսի քարոզած այն քաջ հովիւր, որ իր անձը կը դնէ իր ոչխարներուն վրայ :

Հայաստանի մէկ ծառէն միւսը արիւն վազեց, սպառնացան շարքու շարք ընել ամբողջ հայութիւնը, յոշտեցին մեր մարմինը, մահացուցին մեր հոգին : Նիւթական և բարոյական աւեր կը տիրէր հայուն երկրին մէջ և մեր թոյլ, ձեւապաշտ կրօնականները հետամուտ էին միայն իրենց հոգիները փրկելու, մարմինները ազատելու :

Ասկէ հազար հինգ հարիւր տարի առաջ երբ ուէ թշնամի օտը համարձակէր սրբապղծել Քրիստոսի եկեղեցւոյն չափ սուրբ մեր հայրենիքի սահմանները, կը փակուէին վանքերը, կը դադարէին արարողութիւնները և եպիսկոպոս ու սարկաւազ, խաչը ծոցերնին պահած, կը լարէին, կը սրէին աղեղ ու դաշոյն և կաթովիկոս ու թագաւոր, քահանայ և զինուոր հաւասար քաջութիւնով, հաւասար կատաղութիւնով կը կուռէին :

Բայց դժբ, ժամանակակից հայ կղերներ, դուք ի՞նչ ըրիք, երբ վանքեր և եկեղեցիներ հիմնադրուած քանդուեցան, երբ սուրբերու մասունքը, Քրիստոսի Աւետարանը հրէշային սաքերու տակ կոխկառուեցան : Դուք ո՞ր էիք երբ կը կարէին մեր վիզն

ու լեզուն, կը յափշտակէին հայ «անգէն» երիտասարդին սիրատարի գրկէն անոր պաշտելի նշանածը, հայ անմեղ մանուկին թոթով բերնէն անոր փարելի այրուբէնը . . .

Այո՛, դուք Վոստորի տուրիտու եղբրքներուն վրայ, անտարբեր և անզգայ շարունակեցիք ճգնել միայն : Չվրդովուցաւ ձեր փափուկ թաւիշներու մէջ փաթածուած քնքոջ մարմինները, չխռովեցաւ դարձալի հեշտալի երազներն ամէլ թռչող ձեր հոգիները : այնպիսի ժամանակ մը, ուր նոյն իսկ Քրիստոս պիտի ապստամբէր, եթէ ենթարկուած ըլլար այն տառապանքներուն որոնք Հայաստանը աւերեցին :

Սակայն եթէ ո՛չ մինչեւ հիմա, գոնէ ասկէ ետքը համոզուեցէ՛ք թէ ամէն բան, նոյն իսկ պատարագ և արարողութիւն ունին իրենց տեղն ու ժամանակը : Համոզուեցէ՛ք որ թէեւ դարերը շատ առաջացած՝ բայց ժամանակները բնաւ փոխուած չեն. աւինք հիմակ ալ այնչափ անգութ են, որչափ էին ասկէ երկու հաւար տարի առաջ : Հիմակ ալ իրաւունքը զօրաւորին է, հայրենիքը կուռուղին :

Թղթատեցէ՛ք պատմութիւնը անցիւղին և ներկային, ու պիտի տեսնէք թէ այդ բառերը կարմիր տառերով, սուրին բերանը քանդակուած են հոն :

Թղթատեցէ՛ք նոյն իսկ, եթէ կուզէք Աւետարանը, անոր մէջ ալ իրարու քով գրուած են կուռ, իրաւունք, յեղափոխութիւն և ազատութիւն : Ամբողջ աշխարհը տակն ու վրայ ընողը, հինը հալածելով նորը դնողը ուրիշ բան չէր բայց եթէ Քրիստոսի ազատական ձգտումները, անոր յեղափոխական ոգին : Սուրով պէտք է մեռնել, ով որ սուր կը գործածէր :

Չէ՛, Քրիստոս գերիներու Աստուածը չէ, անոր Աւետարանը սարկութեան պատգամը չէ :

Կրօնքը կեղծիք, քրիստոնէութիւնը ձեւապաշտութիւն չէ՛, թողէ՛ք խաչը, փակեցէ՛ք աւե-

տարանը, կամ հետեւեցէ՛ք անոնց :

Երկինք և հայրենիք միանգամայն փառաբանեցէ՛ք : Մէր և յեղափոխութիւն միասին քարոզեցէ՛ք : Խաչին չափ պաշտեցէ՛ք դաշոյնը, խուսկին չափ վառօդը : Բարձր պահեցէ՛ք ազատութեան, հայրենիքի դրօշակը, շատ բարձր, ձեր խաչին, աւետարանին չափ, անկէ աւելի բարձր . . .

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

### ԱՄԱՆԴԱՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՎԱՐՔԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Ա.

Մանկավարժութիւնը ուրիշ բոլոր արհեստներու և գիտութիւններու պէս դարձաւ մասնաւոր վերջի կիսուն, ահագին կերպարանափոխութիւն կրած և մեծապէս կատարելագործուած է : Այսօր մանուկները բուրովին նոր ուղղութեամբ և հիմնովին բարեփոխուած մէթոտներով է որ կը կրթեն, ինչպէս որ հոգն ալ կատարելագործուած միջոցներով ու գիտական հմտութեամբ միայն կը հերկեն ու կը ցանեն : Բայց մեր մէջ ինչպէս երկրագործութիւնը և բոլոր արհեստները, նոյնպէս և մանկավարժութիւնը, մանուկները կրթելու և դաստիարակելու այդ կարեւոր արհեստը, զեռ բոլորովին իր աւանդական, նախնական վիճակին մէջ կը գտնուի : Իրաւ է, մեր աղոց այլեւս նախնի ու Գործոց չեն կարգացներ, ոչ ալ զանոնք փաշխանի կը քաշեն, մեր այժմու ուսուցիչներն իրենց թէ տարազով և թէ հմտութեամբ հին պատմութիւններու բնաւ չեն հաւասարիր, մեր զպրօցական բարքերն ու սովորութիւնները բոլորովին փոխուած են այժմ, բայց գիտէ՛ք թէ հակառակ այս կերպարանափոխութեանց զեռ ո՛րքան բան կը մնայ հինէն, մեր բուսահոգի պատմելիներէն :

Իմ կարծիքով մեր վարժարաններու բարեփոխութիւնը բոլորովին աւերելութեան է. անոնք նոյնն են ինչ որ էին ասկէ քսան ու թերեւս յիսուն տարիներ առաջ. նոյն չէնքն է զոր ժամանակի պահանջներուն յարմարեցնելու համար նորոգած, յաւելուցներով ու կրճատումներով կուրած, ամէն կողմը ներկած ու զարդարանքներով ծածկած ենք, բայց երբէք չենք յաջողած անոր անեղութիւնն ու անյարմարութիւնը բոլորովին բառնալ, որովհետեւ հին չէն-

քին էական մասերը կազմող հիմքերն ու պատերը կը մնան անփոփոխ : Մեր կրթական գործը լաւ հիմքու վրայ գրած ըլլալու համար արմատական փոփոխութիւն ընել հարկ է որ ո՛չ թէ աւանդականութեամբ սնուած ու ձեւակերպութեամբ կուրացած արարածներու՝ այլ իր մէջ արհեստի կոչուած զգալով մասնաւորաբար ուսուցչական ասպարէզին համար պատրաստուած անհատներու գործն է Աւանդամուտութիւնը՝ որ բունականութեան եւ գիտական օրինաց հակառակ մէթոտներու եւ միջոցներու ստեղծիչն է, իր բոլոր գործութեամբ կիշխէ այսօր մեր ուսուցչական մեծամասնութեան վրայ : Վարժապետանոցներ չունինք որ մեզ տիպար ուսուցչներ արատաւորեն, հետեւաբար այժմ մեր մանուկները կրթելու եւ դաստիարակելու փափուկ պաշտօնը ստանձնողները քիչ բացառութեամբ մեր խեղճ ու կրակ վարժարաններու շրջանաւարաններն են, որոնք որքան ուսեայ ու գիտուն ըլլան չեն կրնար ուսուցանելու, սղուռ մտաւոր ու հոգեկան կարողութիւնները զարգացնելու արհեստը գիտնալ : Գոնէ հոգեբանութեան ու մանկավարժութեան դասընթացներու հետեւելու եւ տիպար ուսուցչական մը տեսնելու, քննելու պատահութիւնն իսկ չունեցող այդ անձերը երբ դժբաղտարար մեր զաւակները կրթելու խիստ պատասխանատու եւ փափուկ պաշտօնին կը կոչուին, անշուշտ չեն կրնար տիպար ուսուցչներ հանդիսանալ : ասոնց բոլոր վարպետութիւնն ու արժանաւորութիւնը իրենց վարժապետներուն աւանդական ձեւերը եւ եւրոպական կրթական հաստատութիւններու կարգին ու սարքը, արտաքինով միայն, ստրկօրէն ընդօրինակելուն մէջ կը կայանայ : Ուրեմն մի հպարտանաք եւ անտարբեր նստիք կարծելով թէ ձեր զաւակներու կրթութիւնն ու դաստիարակութիւնը պահանջուած եղանակով ու ոգով կը տրուի արդէն, եւ հետեւաբար ազգին ապագան այդ տեսակետով քնաւ մտատանջութիւն չի պատճառեր : Հարեւանցի քննութիւն մը իսկ պիտի ձեզ համոզէ որ մեր աներեւութապէս բարեփոխուած եւրոպական նմանօրինակ հաստատութիւններու վրայ ձեւուած վարժարաններու մէջ գեո որ աստիճան արմատացած է աւանդամուտութիւնը, եւ թէ մեր տղոց արուած

կրթութիւնն ու դաստիարակութիւնը որքան յոռի ու անկատար է, հակառակ կարգ մը լաւատեսներու կամ ինքնազով պոստախօս ուսուցչներու շրջուցիչ յայտարարութեանց : 4. Պիժն

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**

4. Պոլիս, 12 Փետր.

Նորութիւն չկայ, հնութիւններն են որ կը նորոգուին հետըհետէ :

Գերեզմանատունի խնդիրն է որ մտքերը կրկին կը յուզէ :

Օրթապիզիի եւ Պէշիկթաշիի մէջ գերեզմանատուններ ունինք ուր 30 տարիէ ի վեր ննչեցեալ չթաղուիր, անոր համար որ պալատին մօտ կը գտնուին, մանաւանդ վերջինը :

Ասկէջ քանի մը տարիներ առաջ Նուրեան էֆէնտի առաջարկեց որ Պէշիկթաշի գերեզմանատան գետինը կառավարութեան թողուր, պայմանաւ որ Բերայի գերեզմանատունը, ուր նոյնպէս մեռել չթաղուիր, առանց ու եւ միջամտութեան ազգին թողուի եւ այդ շահարեք գետինը վրայ ազգային կառուածներ շինուին : պէտք է յիշել թէ Վարեան Պատրիարք ալ Բերայի գերեզմանատունէն մաս կուզէ, ժամանակաւ հայ կաթողիկոսներու հոն թաղուած ըլլալուն ծիծաղելի առարկութեամբը :

Նուրեանի այս առաջարկը ընդդիմութեան բազմեցաւ եկեղեցականներու կողմանէ եւ այնքան ազմուկ յարուցուեցաւ որ ձայնը մինչեւ պալատ հասաւ եւ երբ Մակար կաթողիկոսի հաւանութեամբ նոյն գերեզմանատունը կառավարութեան թողուելուն միտումը յայտնուեցաւ, այն ժամանակ ալ Սուլթանը մերժեց :

Բարթոլոմէոս իր տեղապահութեան օրով այս խնդիրը քրքրեց, անձնական շահ նկատելով գործին մէջ, սակայն զինքը շքեղ

չապատող կղերականներու յուզումը տեսնելով տեղի տուաւ եւ գործը ծածկուեցաւ :

Բայց այս անգամ խնդիրը Պէշիկթաշի գերեզմանատունէն Օրթաքէօյի գերեզմանատան դարձած է եւ անոր քով վերջին տարիներու մէջ զինուորական շէնքեր շինուելուն առթիւ, կուլուի գերեզմանատունն ալ գնել :

Խնդիրը բերանացի ըստած է Պատրիարքին եւ Օրմանեան որ առիթ չփախցնէր թէ՛ իր շահը ապահովելու եւ թէ՛ ծառայութիւններ մատուցանելու հաւանած է, միայն թէ հարկ է խընդիրը ժողովին ներկայացնել իբրեւ ձեւակերպութիւն :

Եւ արգարեւ ալ անցեալ ուրբաթ օրուան Խառն ժողովոյ նըստին, Օրմանեան խնդիրը կը ներկայացնէ : եկեղեցական անդամք կառարկեց թէ քանի որ գրաւոր առաջարկ մը չկայ այս մասին եւ նամանաւանդ խնդրոյն ստիպողականութիւն ալ տրուած չէ, հետեւաբար հարկ չկայ զբաղել այսպիսի գործերով : Խնդիրը նոյն օրը կը գոցուի, սակայն Օրմանեան ո՛չ իր նկատմանը կրնայ թողուլ եւ ո՛չ ալ շահը, ուստի այս շարքովու ցուրաւ անձրևոտ օր մը քաղաքապետին հետ նոյն գերեզմանատան տեղը կերթայ, կը շարժէ կը շարժէ, աչքէ կանցնէ իբրեւ պարզ երկրաչափ մը եւ «կորոշէ» որ իբրեւ սովորական գետին մը անպայման կերպով թողուի կառավարութեան ի փոխարէն առնելով մէկ քանի հարկ : որով ազգին եւ «նոյնքան ալ իր անձին համար» :

Հիմա խնդիրը կրկին պիտի գայ յառաջիկայ ուրբաթ օրուան Խառն ժողովին, նոյն իսկ Պատրիարքին կողմանէ : վասն զի այն խնդիրը որ ինք վերջացուցել էր գլուխ գլխի տալով թուրք պաշտօնէին հետ, կուզէ նուիրողորմել ժողովին որոշմամբ անշուշտ անոր վրայ ճնշում բա-

նեցնելով որպէս զի ժողովը ին կարենայ հաւատացնել թէ ժողովը որոշեց : բան մը որուն սուտ ըլլալը ամէնքս ալ գիտենք եւ ոչ ոք պիտի կլլէ, եւ արդէն խնդրոյն այս կերպ կարգադրութեան մասին Պատրիարքէն եւ Յարութիւն փաշայէն զատ ոչ ոք կայ համամիտ :

Երբ մէկ կողմանէ այսպիսի խոշոր իրաւունքներ կը թաղուին ի փոխարէն ի՞նչ կը ստացուի, ու չինչ : Ուղիղ կամ սխալ, ամբողջ եկեղեցականութիւն մը մարաւած է ասոնց դէմ նոյն իսկ Սուլթան Աղիզի օրերէն, բայց եւրասիկ թուականներուն : Պատրիարքներն էին որ կը պաշտպանէին ազգին շահերը մինչդեռ հիմա իրենք իրենց ձեռքովը կը յանձնեն ամէն բան :

Բայց ո՛ւր է պիտի վախնայ Օրմանեան քանի որ ինքը կըսէ «վախնալիք մարդեր, մանաւանդ զառաւապինք չկան Պոլսոյ մէջ եւ եղածներուն ալ գլուխին զարնուած է» : Ազգային երեսփոխանական ժողով չկայ, իսկ լրագրութեան ալ բերանը կը պաշտեն : Վանայ կրօնափոխութեան համար մէկ քանի յոգուած հրատարակուեցաւ եւ անա Պատրիարքը իսկոյն մարդ խրկից եւ առաջը առաւ որ գիրքը չխախտի : սակայն եկեղեցականութիւնը պիտի ըսէք : այո՛, եկեղեցականութիւնը իրեն հակառակորդ, ինքն ալ եկեղեցականութեան հակառակորդ է : միայն Արմաշցիք կան բացը :

Կրօնական ժողովոյ անդամք հաւատարիմ են իրենց կոչումին, օրինաւոր եւ օգտակար որոշումներ կուտան սակայն Օրմանեան որոշումները կը փոխէ եւ չգործադրէր : որո՞ւ բողոքեն : եթէ քաջուին եւ հեռանան Պատրիարքին հացին իւր քօած պիտի ըլլան եւ անա պիտի սեռենք Արմաշեաններու կրօնական ժողով մը որոնք վայտէ մարդերու պիտի

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ԱՔՍՈՐԵԱԼ**

Շար. Ամիրոյ օրէնքն եւ վիրջ

Նորէն իր տեղը կը դառնար, կը բանար պայուսակը, ուշադրութեամբ կը դիտէր այն ընծաները, զորս Պոլսէն գնած էր վերջին տարիները Անկորայի մէջ խնայած գրամով : Թէև չնչին բաներ էին անոնք, բայց իր կնոջ եւ ազգականներուն համար աւելի թանկ նուէր չէր կրնար ըլլալ :

Սալոնիկը երեւցաւ :

Աքսորականին սիրտը պայթելու չափ սկսաւ բարբախել, վերջին ճիգ մը ըրաւ քաղաքին չի նայելու, բայց աչքերը անկէ չէին զատուեր : Շոգեանաւը հասաւ լուսադէմին, երբ քաղաքը ընկզմած էր թանձր մշուշի մէջ որ սկսաւ քիչ քիչ բարձրանալ : հազարաւոր լայտերներ շրջուն աստ-

ղերու պէս կը վառէին ծովին մէջ, մակոյկներ էին անոնք՝ որոնք շոգեանաւին մօտենալ կը ջանային :

Շոգեանաւը կեցաւ :

Սկսաւ ազմկալի իրարանցում մը, նաւավարները ցատկեցին շոգեանաւին մէջ, եւ սկսան պոռալ, քաշկոտել ուղեւորները եւ իրարու ձեռքէ խել անոնց իրեղէնները :

Պուրկարը մտածած էր շոգեանաւը կենալուն պէս, մակոյկ մը վարձել եւ գուրս հլլալ, բայց երբ այս իրարանցումը տեսաւ, իր կապոցն առաւ, քաշուեցաւ անկիւն մը սպասելու :

Կէս ժամ վերջը ինքն ալ ցամաք ելաւ : Իրեղէնները մաքսատան մէջ քննել տալէն հետք, քաղաքին ճամբան րունեց, բայց դեռ հրեք քայլ շտաած ծանօթ ձայն մը, անուրջ տալով՝ ամբողջովին սարսուցեց զինքը : Եւ կայծակնահար եղաւ կարծես երբ տեսաւ իր կինը, երկու աղջիկները եւ մանչը որոնք կը վազէին զէպի իրեն :

Կը նայէր եւ չէր հաւատար, բոլոր արիւնք խուժեց զէպի սիրտը : Իր սիրելիները ծուռկերուն վրայ ինկած կը գրկէին, կը համբուրէին զինքը, բայց ան քարացած էր կարծես, աչքերը կը մթաղէին, ո՛չ կրնար խօսիլ եւ ո՛չ ալ գրկախառնուիլ :

Յանկարծ խուհառաչանք մը ըրուցաւ կուրծքէն : ոտքերը դողացին, աչքերը խաւարեցան, երեսը մոտելի գոյն ստացաւ ու գետին ինկաւ :

— Աստուած իմ, աղապակեց կինը ու վրան ինկաւ : զաւակները զուրաւարի եւ վշտահար փորձեցին վեր վերցնել իրենց ստորաբազկ հայրը :

Դժբախտ աքսորականին աչքերը անգամ մըն ալ բացուեցան, բուն ճիգ մը ըրտաւ տեսնելու վերջին անգամ իր սիրելի կինը եւ զաւակները : Ու հոգին աւանդեց :

Չէզ կինը սկսաւ լալ ու օղնութեան կանչել :

Խոնուած բազմութիւնը վշտահար կը դիտէր այս սրտաճճիկ տեսարանը : Ամբոխին մէջէն բժիշկ մը մօտեցաւ,

զպաւ դիտելին ու իր բարեկամներուն ըսաւ : վերջացած է . . .

Կինն ու զաւակները այն ատեն զգացին թէ ի՞նչ սեւ զժազգութեան մը ենթարկուած են : Վայնասուն մը ինկաւ . . . թշուառները իրենց սոսյ աղաղակներով օգը կը պատասէին եւ իրենց արցունքներով՝ անշնչացած գիակը կը լուային :

Շրջապատողները իրարու կը հարցընէին մեռնողին ո՞վ ըլլալը : ոչ ոք գիտեր : միայն կնոջ ու զաւակներուն ողբերէն իմացուեցաւ որ պուրկար էր :

Ամէնքն ալ ողբացին եւ վշտահար հեռացան :

Բայց ոչ ոք իմացաւ որ այս եղկելին իր կինը, զաւակները եւ հայրենիքը տեսնելու ուրախութեան մեռած էր :

Պ. ՍԻՐԵՄՃԵԱՆ

նմանին : Իսկ Գաղափարական Ժողովոյ անդամներէն անոնք որոնք բաւական խիղճ ունին «մենք այս մարդէն կը վախնանք» կըսեն : Ահաւասիկ գործերուն վիճակը :

Ժողովուրդը ա՛լ զգում ամէն բանէ ու սրտին ցոյճէն և քիչ մըն ալ վտանգուելու վախէն չուզեր բան մը ընել : Մէկ կողմանէ իրաւունքներ կը պահանջուին , ընտրութիւններ կը բեկուտին , և ասոնց փոխարէնը շահուցը նոյն ինքն Պատրիարքն է որ հեռավորապէս Բրեստի Լիճնէն մէջ իր ունեցած գումարները ստուարացնել :

Բացի ասոնցմէ Պատրիարքը չի վարանիր ըրազիւններն ալ թոյլատրելու որ եպիսկոպոսներու գէժ գրեն , իրբեւ պաշտօնէ փախչողներ , ինչպէս շրաւ ներսէս եպոս Ասլանեանին :

Ասլանեան վան երթալու համար այնպիսի առաջարկներ կը ընէ որոնց Պատրիարքը չուզեր ստանալ կտրել , վասն զի իր ապիկարութիւնը երեւան պիտի ելլէ և ընդհակառակը կը պնդէ որ առանց բան մը պահանջելու վան երթալ և հոն հրաջք գործէ :

Ահա այս է օրուան վիճակը որմէ կաթողիկոսները և բողոքականները քաջալիբրտած իրենց որսը կընեն :

Սքանչելի կացութիւն : այնպէս չէ՞ . սակայն Օրմանեան գեապաններու և այլ օտարականաց այցելութիւն տալով , հեռագիր քաջելով գործի վրայ ցուցնել կուզէ ինքզինքը , մինչդեռ օտար գեապանատուններէ «սչ սք» պատասխանեց իր հրաւերին , նուպար փաշաի հոգեհանգստին առթիւ ներկայացուցիչ մը զըրկելով :

Այս խտրութիւնները հարկաւ վերջ մը պիտի գտնեն և ասի միւրիայն Օրմանեանի անկումը կըլլայ :

Հիմա իրողութիւնը այն է որ յառաջիկայ ուրբաթ Խառն Ժողով պիտի գումարուի և որոշէ արգէն որոշուած Օրթոքսոյի գերեզմանատան յանձնումը :

Աղջային խել մը յարաբերական գործեր , թշուառութիւններ առանձնաշնորհումը խնդիրներ , Սոյ ինդիս և այլն և այլն թող սպասեն իրենց կարգին : Ի՞նչ պէտք կայ սճապարելու , դեռ Օրմանեան «ոյնի»ներ ունի խաղալիք :

Աղեխանգրիս , 5/17 փետրվ.

Անցեալ ուրբաթ Գահիրէի աղապարներուն կողմէն երկու հանրապիր զրկուեցաւ Պատրիարքարան , 600է աւելի ստորագրութիւնով , մէկը Տառեան փաշային , իբր տանապետ Գաղ. Ժողովին , և միւսը Տ. Գրիգորիս քահանայ Օհաննէսեանի , իբր ատենապետ Կրօն. Ժողովին , Հանրագիրը ստորագրողները կը բողոքեն Աղգ. վարչութեան Խառն Ժողովին գէժ ,

տեղւոյս առաջն . խնդրոյն մասին հեռուած հակասահմանադրական ընթացքին համար . Պատրիարքարանը պարտաւոր է Գրան հաշորգել կատարուած իրողութիւնը . Դուռը կարող է մերժել կամ անհետեւանք թողուլ : Ստորագրողները պիտի կուտան վարչութեան թէ՛ Պատրիարքարանը իր հետեւած ուղղութեամբ՝ կասկածելի նկատել կուտայ նախդ. Պատրիարքը , որ մինչև այսօր Գրան կողմէ ոչ մէկ ամբաստանութեան ներքեւ կը գտնուի :

Այս հանրագիրները տեղւոյս ամէն դատակարգէ և բարձրատիճան անձնաւորութեանց կողմէ ստորագրուած են :

Նուպար փաշայի թաղման մանրամասնութիւնները թէ՛ աղապարի և թէ՛ օտար թերթերու մէջ ընդարձակօրէն գրուեցան . ուր ի աւելորդ է կրկնել : Կտակի գոյութեան մասին ու է լուր չի կայ : Հանգուցեալը Գերմանիոյ հպատակ էր , թերեւս հիւպատոսարանին մօտ արձանագրութիւն մը եղած ըլլայ , ուրկէ ձայն չի կայ տակալին :

Յուզարկաւորութեան պահուն թափորին մէջ մասնաւոր ուշագրութեան առարկայ եղաւ , « եղւոյ . նորահաստատ հայկական մատենադարանին հսկայ պսակը . բաց գիրք մը՝ եռագոյն ծաղիկներէ հիստած , որուն վրայ գրուած էր «առ նուպար փաշա՛ պարձանք հայ ազգին» բառը : Մատենադարանին խնամակալութիւնը , զոր կը կազմեն Մանթաշօֆ տան Եղիպատի ընդհ. ներկայացուցիչ , Օհաննէս Մութաֆօֆ , վարժարանաց տեսուչ Տ. Յակոբ Պէքեարեան և Տ. Օ. Ենորհ. քեան , Պողոս փաշայի ներկայանալով , ուղերձ մը յանձնած են , և անորուն և յուզիչ շեշտերով գրուած : Պողոս փաշա խոստացած է պաշտօնական կանգնել այդ ձեռնարկին :

Յառաջիկայ կիրակի , 14 փետր. հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի , որուն պիտի հրաւիրուին պաշտօնական անձեր և օտարազգիներ . պիտի պատարագէ Յակոբ Աշոտ Եպոս : Աղեքսանդրի ; մէջ ալ քառասունքին հոգեհանգիստ պիտի կատարուի :

ՍԻԼԵՍՏԻՆԻ ՎԱՐՄԱՐԱՆԸ

Շարժումը 97 թուին մէջ Սիլիստրէի վարժարանին մասին հետեւեալը գրուած էր . «Տեղւոյս աղջկանց վարժարանը սղորմելի վիճակի մը մէջ կը գտնուի «անփորձ» ու «սոգէտ» վարժուհի մը յանձնուած ըլլալուն պատճառաւ : Կը յուսանք թէ Պատ. հոգարարութիւնը ուշագրութիւն պիտի գործնէ այս կէտին վրայ , և այժմեան որ ընտրութեամբ մը պիտի ուզէ մղում տալ արդէն բաւական ևս մնացած մեր իրական սեփին կրթութեան գործին» :

Մեր այս կարծ , բաց արգար զի-

տողութիւնը այնքան հաճելի չէ երեւցած հոգարարութեան , որ , փոխանակ յայտնելու թէ ի՞նչ փորձառութեան և կրթութեան աէր է դպրոցի վարժուհին , որպէսզի կարողանար այդպէսով հաստատել մեր աւելած սեղեկութեանց «ստալոյ» ըլլալը , սեղեկական թերթի մը միջոցաւ , երկար շարք մը հայտարարութեան թափած է մեր թղթակցին պիտի և անոր մասաւոր մակարդակը քննադատելու ելած : Մենք չենք ուզեր նկատի առնել հոգարարութեան մասաւոր մակարդակը , միայն կուզենք յիշեցնել որ , իրենց պարտքն էր պաշտօնացանկ վարժուհիին «անփորձ» ու «սոգէտ» ըլլալը :

Իսկ մեր կարծիքն այն է թէ Սիլիստրէի իր վարժարանին այժմեան խղճալի վիճակին համար վարժուհիէն աւելի յանցաւոր է հոգարարութիւնը , որ մանկահասակ օրիորդի մը յանձնած է անոր սարիքին եռագրական թուով աշակերտութիւնը դատարարութեան ծանր և փափուկ գործը :

Սիլիստրէի հոգարարութիւնը փոխանակ փողոցներն ինչալով մեզ հայտնելու համար անկիւն մը փրկեալու . լաւ կընէր , եթէ ճանչնար և ուղղէր իր սխալը :

Եթէ նա քիչ մը տուել մօտէն սեղեկացած ըլլար մեր Սիլիստրէի թղթակցութեանց բխած ազդերին , կարծենք թէ ինք ալ պիտի ամչնար այդ անսեղի «լուսանք»ներուն համար :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԱՍՏԱՆՁ

Անցեալները «Նարժում» «Բուրիէ տէ Պալքանի» նախաձեռնութեամբ Հայաստանի սովետականներուն ինպատակ հանգանակութիւն մը բացած էր , որուն գումարը վերջնականապէս հասած էր 354 Ֆր. Ի. Այս գումարէն 176 Ֆր. ժամանակին «Բուրիէ տէ Պալքանի» իրկուած ըլլալով , սովետականներուն հասցնելու համար , այս անգամ մնացորդը , 178 Ֆր. — իրկելու ծախքն ալ միտսին հաշուելով — Պալքանի Աղգ. Պատրիարքարանին կուղարկենք որպէս զի ընդ փոյթ հասցնէ Հայաստանի սովետականներուն որոնց վիճակը , այս միջոցին անտանելի դարձած է , և հեղհեղ տանգաւոր երեւոյթ մը կը սկսի ունենալ , եթէ աղապարեան կարեկցութեան շարժանանայ և չի փութանք անոնց օգնութեան համար մեր նուէրներով և նպատակներով :

ԲԱՆԱՍԵՐ

Հանգիստ Հնախօսական , Պատկական , Լեզուարանական և Բեկական

Այս անունով հանդէս մը պիտի հրատարակուի յառաջիկայ մարտամայիս վերջը , հանրաձայնութեամբ Տ. Կ. Յ. Բաժնակցանի անօրինութեան սակ , և աղապարի ու օտար արեւելադիտաց աշխատակցութեամբ :

ԲԱՆԱՍԵՐԸ պիտի խօսի զուր բանասիրական նիւթերու վրայ : Պիտի հրատարակէ մեր ազգային հնախօսութեան , պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ հետազոտութիւններ : Թարգմանութիւններ պիտի տայ մեր ազգին և երկրին վրայ սեղեկութիւններ պարունակող հայ-

կական , ստուրական , պարսկական , շօշական բուհողորներէն կամ արձանագրութիւններէն : Պիտի զբաղի բնիկ պատմական խնդիրներով և և այլն :

ԲԱՆԱՍԵՐԸ սկիզբ պիտի զնէ իր հմուտ աշխատակիցներէն Սուքիաս Վ. Պարոնեանի ընդարձակ և կարեւոր մէկ գործին որուն 20 տարիէ ի վեր կաշխատի հեղինակը . այս պորձն է Մատենացանկ մը Հայոց վրայ լուսող Եւրոպական և Ասիական բոլոր լեզուէ հրատարակուած գրքերու և յօդուածներու :

ԲԱՆԱՍԵՐԸ առ այժմ պիտի հրատարակուի վիճագրութեամբ միայն , որովհետեւ ազգը սակաւին չի կրնար զուտ մասնագիտական թերթ մը պահել , իսկ փափագելի էր որ գիտնականները ջանային բաժանորդներ գտնել , նայելով նիւթին օգտակարութիւնը , ապահովելու համար հանդէսին հրատարակութիւնը : Յաջողութիւն կը մտնենք մեր գիտնական պաշտօնակցին :

Առ նուազն 100 էջէ բաղկացեալ տարեկան 4 գրքի բաժանորդագիրն է 20 Ֆր. իւրաքանչիւր գրքը կարժէ 5 Ֆրանք :

Հասցէ  
Basmadjian 112, B-d Rochechouart  
Paris

ՔՐՈՆԻԿ

Ռուման թերթերը կը գրեն թէ Ռումանական կառավարութիւնը ասանց պատճառի , կոպտութեամբ երկրէն դուրս ըրած է կաթողիկոսական այցելու հովիտ Իէնրդ Եպոս . Ի. Թիւնեանը , նոր ապացոյց մը տալով իր անխղճութեան :

—Փրէրները կը շարունակեն իրենց վայրագ շահատակութիւնները Հայաստանի սովետական գաւառներուն և մասնաւորաբար վանի մէջ : Դոմինիկեանները նպատակ բաշխման և դաւանափոխութեան գործը յանձնելու են հայ-հռոմէական առաջնորդին , որ տեղացիներուն լեզուն բարբը գիտնալով , կարող է աւելի դիւրաւ շահիլ անոնց սիրտերը : Ինչպէս միշտ , այս անգամ ալ կրօնափոխական շարժումին գլխաւոր սատարներն են հայերը : Ժողովուրդը շատ կը քննադատէ նախնական Գրիգոր և Պողոս անուն անձերը : Պատրիարքարանին հըրամանով իբր թէ քարոզիչներ կըլլան եկեղեցիներուն մէջ կաթողիկոսական հոսանքին առաջըն առնելու համար : Սակայն մեր անկարող , ունուս կղերները այնքան ոգորմելի չէնք որով կը կուտին որ ծիծաղելի կըլլան , Հ. Անտոն Զնտոյեանի նման ճարպիկ և ուսեալ վեներաբանի մը գիւմաց , մենք ալ գոնէ կարող գրուի մը պէտք է ունենայինք : Հիմա ո՛չ նիւթական , ո՛չ հոգեւորական միջոցներ կան մաքառելու համար :

—Թեհրանի հայ-բողոքականները ժամանակէ մը իվեր վէճ ունէին ամերիկացի միսիոնար-

ներու հետ որոնցմէ կուզէին վերջնականապէս բաժնուիլ: Գիշ ընչ անհամաձայնութիւնը շեշտուելով, մեծագոյն մասը տարուոյս սկիզբը թողուցին բողոքականութիւնը և իրենց Մայր Եկեղեցոյ գիրկը դարձան: Թեհրանի մէջ այժմ մնացած բողոքականները ուղղակի կամ անուղղակի շահ ունեցողներն են:

—Տէմիր-խան Շուրայէն «կապալ» կը գրեն թէ Յունի. 22ին վերստին բացուել է լուսաւորութեան նախարարին ձեռքն անցած հայոց եկեղեցական ծխական նախկին դպրոցը, 42 աշակերտներով: Դպրոցին բացման ատեն Ռուս կրօնուսոյց քահանան քարոզ մըն է խօսեր ուր ըսեր է թէ՛ «Մենք ամենքս ալ եղբայրներ ենք, ամենքս ալ մէկ Աստուծոյ կալօթենք, մէկ Քրիստոսի կերկրպագենք և մէկ Հայրենիքի զաւակներ ենք, ուստի մեր մէջ ոեէ թշնամութիւն պիտի չըլլայ»:

—Ատրպատականի առաջնորդ Սահակ Այվատեան եպիսկոպոսին զեմ կծու գանգատներ կը գըրուին Թիֆլիսի թերթերուն մէջ, իբր անյարմար իր պաշտօնին, անկարող սիրաշահելու տեղական կառավարութիւնը: Մայր աթոռէն կը խնդրուի աւելի կարող հովիւ մը զրկել այսքան փափուկ առաջնորդական աթոռի մը համար:

— «Ուէստմինստր կազէթ» անգլ. թերթը կը ծանուցանէ թէ Բարձր. Նուպար բաշայի թողած հարստութիւնը կը հասնի 100 միլիոն ֆրանքի:

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

#### Մ Ա Կ Ե Դ Ո Ւ Ս

Մակեդոնիոյ քրիստոնեաներու վրայ գործ գրուող թրքական անտանելի վայրագութիւններուն զեմ բողոքելու համար, որոշուած է միթինկ մը գումարել յառաջիկայ փետր. 19ին ժընէվի մէջ: Այդ առթիւ Մակեթոնական բարձրագոյն քօմիթէն հրաւիրագիր մը հրատարակած է ուր հրաւեր կը կարդայ պուլկարներուն օգնութեան ձեռք կարկառել իրենց արեւակից այդ գըրժըզը ժողովրդին որ 500 տարիէ ի վեր կը տառապի թուրքին բռնականութեան տակ, որպէս զի Մակեթոնացիք ալ հասկնան թէ՛ զուրկ չեն մնացած ու է պաշտպանութենէ:

Միթինկին մէջ, ի միջի այլոց պիտի խօսի հայկական և մակեթոնական խնդիրներուն համար այնքան անձնուիրաբար աշխատող հանրաժանօթ Բր. Վիքթօր Պէրար:

—Պօլսոյ ռուսական դեսպան Ջինովիէվ, Սուլթանին հետ տեսակցութեան մը միջոցին, Սուլթանին ուշադրութիւնը հրաւի-

րեր է Գոսովայի վիլայէթին մէջ վերջերս տեղի ունեցած խառնակութեանց վրայ, ցանկութիւն յայտնելով անոնց շուտով կարգադրութեանը մասին: Ջինովիէվ ցաւ յայտնել է նաև որ, հակառակ եղած դիտողութեանց, նոր ալպանական ժողովներ կը սարքուին Գոսովայի և Շքոտրայի նահանգներուն մէջ: Սուլթանը անմիջապէս հրահանգ զրկեր է այդ վիլայէթներուն կառավարիչներուն, ամեն միջոցներով արգիլել նոր ալպանական ժողովներու գումարումը: Էտհէմ փաշա այդ նահանգներուն ընդհ. հրամանատար կարգուած է:

#### ՐՈՒՄԷԼԻԻ ՕՍՄ. ԲԱՆԱԿԸ

Վիէննայէն կը հեռագրեն Թայմըզի թէ Օսմ. պետութիւնը զինուորական ահագին ուժեր ունի Րումէլիի մէջ: Նախապէս 3 զօրարանակ ունէր Եւրոպական Թուրքիոյ մէջ, Կ. Պոլսոյ, Էսիրնէի և Շքոտրայի ընդ ամէնը 80,000 հոգի: Երբ Յունաստանի հետ հաշտութիւն կնքուեցաւ, 40,000 հոգի ալ աւելցաւ Եւրոպ. Թուրքիոյ ուժերուն վրայ, վերջերս ալ 30 հազար հոգի՝ պատերազմական պէտքերով մէկտեղ: 40—50,000 ալպանացիներ ալ, Իբէքի համաժողովէն ի վեր, Օսմ. բանակին արամադրութեան ներքեւ են, որով թուրքին Րումէլիի մէջ ունեցած զինուորական ուժը, զէթ անուանական կերպով կը հասնի 220,000ի:

Այս հաշիւը տալով, թուրք թերթերը կաւելցնեն. «Պալքանեան մանր պետութիւնները հարկաւ պիտի պատկառին զինուորական զօրութեան այս ահեղ պատրաստութիւններէն, և արգէն այդ կարգի տրամադրութիւններ սկըսած են ցոյց տալ»:

—Սուլթանը ամսոյս Տին ունկընդրութիւն մը շնորհեր է թիւրք զինուորներուն կըթութեան համար Օսմ. բանակին մէջ ծառայելու կոչուած գերման սպաներուն: Սուլթանը յոյս յայտնել է թէ, սպաները թանկագին ծառայութիւններ պիտի մատուցանեն և պիտի ջանան թուրք բանակին մէջ ստեղծել այն զինուորական ոգին, որ մեծ և անպարտելի ըրած է գերման բանակը:

#### Կ Ր Է Տ Է

Փետրվար 3ին բացուեցաւ Կրէտէի ազգ. ժողովը, քուէարկելու և ընդունելու համար նոր պատրաստուած Սահմանադրութիւնը: Ենթադրու է իշխանը գահաձառին մէջ յիշեց պետութեանց պահանջած պայմանները և յայտնեց թէ պիտի աշխատի խաղաղեցնել կղզւոյն երկու ազգութիւններն ալ: Գոհունակութիւն յայտնեց այն ընդունելութեան համար զոր ըրած էին իրեն առաջին անգամ Կրէտէ ռաք կոխած պահուն: Ա-

ւելցուց նաև որ ծրագրուած Սահմանադրութիւնը, ընդհ. առմամբ, կատարելապէս կը համապատասխանէ բնակչութեան ձեռք ստաններուն, և չորս պետութեանց պահանջքին:

Ժողովը համակրութեան շեք մ ցոյցեր ըրաւ իշխանին:

—Իշխան Ենթադրու պաշտօն յանձնել է քանէպցի չորս իսլամ երեւելիներու Գանտիա երթալ և խրատել իրենց կրօնակիցները որպէս զի չի գաղթեն:

Գանտիաէն եկած վերջին լուրերուն նայելով անգլիական իշխանութեանց ընթացքը խլտտարօրինակ երեւցած է: Անգլիացիք պայրամի տօններուն ատեն արտասովոր հանդէսներ պատրաստուեցին, որոնք անշուշտ կը քայալերեն կղզիին իսլամները կարծելով թէ Անգլիացիք իրենց բարեկամ են: Անգլիացիք խըստիւ արգիլել են քրիստոնեաներուն Կրէտէի մէջ տպուած այլաբանական պատկերներու վաճառումը կամ ցուցադրութիւնը: Անցեալները այդ տեսակ պատկեր մը հրատարակուած էր ուր չորս տէրութիւնները, Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա և Իտալիա կրէտէի շղթաները կը կոտրէին և զայն կազատէին: Անմիջապէս խանութպաններուն հրահանգ արուեցաւ անհետացնել այդ պատկերները:

#### ՏԵՂԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Երեկ քաղաքիս յունական հիւպատոսը, Տօքթ. Վալէնտա, կարճ հիւանդութենէ մը ետք, հոգին աւանդեց:

Հանգուցեալը խիստ ազնիւ ու բարեսիրտ անձնաւորութիւն մըն էր. 40 տարիէ ի վեր բժշկութեամբ կը զբաղէր Վառնայի մէջ և ամէն տեղ համակրութեամբ կընդունուէր:

Գժեպղը Տօքթ. Վալէնտա 2 մանչ և 3 աղջիկ զաւակ ունէր: Երկու մանչ զաւակները, իրենց բժշկական ուսմանց աւարտելէն երկու տարի ետքը, իրարու ետեւէ մեռան: Նմանապէս երեք աղջիկ զաւակները մի աւ մի ամուսնացնելէ ետք, երեքին ալ ամուսինը մեռելով այրի մնացած էին:

—Փոխառութիւն մը կնքելու համար Վիէննա մեկնած Պուլկարական նոր գահիճի երկու նախարարները ամէն կողմէ լաւ ընդունելութեանց հանդիպած են: Բացուած բանակցութիւնները կը խոտանան երկրին աւելի նպաստաւոր և յաջող արգիւնք մը ունենալ:

—Կրէքով-Րատոսլավօֆ դահլիճը հետզհետէ սկսած է ցոյց տալ իր հակառուսական ձգտումները: Այս տրամադրութեանց նշանները կը համարուին Ստամպուլօֆիաններու և Րատոսլավօֆիաններու ձուլումը: Սօֆիայի

ռուսական դեսպանը, Պախմէթիէվ, ուշի ուշով կը գիտէ պուլկար նոր գահիճին այս տրամադրութիւններն իր արտաքին քաղաքականութեան տեսակէտով:

—Իշխան Ֆէրիտինան շարաթէ մը ի վեր կը տառապէր ինֆլուէնձաէ, ստիպուած ըլլալով պալատին մէջ վակուելի և ունկընդրութիւն չընդունիլ:

#### ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹ

Տիար Տիգրան Տուժարեան կը ծանուցանէ թէ ի ֆ. Պոլսոյ Գուրչուն խանի դիմաց, կը վաճառէ Ազգ. Հիւանդանոցի ամենէն ընտիր նոր տեսակ սիկարի թուղթէն, զեղնալ գիւնեով մեծաքանակ և փոքրաքանակ: Բարեգործութիւնը և շահը կը պահանջեն որ ա՛յն հայ գործածէ զայն: Կան նաև Պօն. Վոյթօ և ուրիշ ամէն տեսակ թուղթեր: Գանձնարարութիւնք կը կատարուին ճրջաբի և փուլով:

### ՊՕՐՍԱ

Վառնա 17 Փետրուար

#### ՊՈՒՂՏԱՅ

Վակօն. լիպրա 55—58, հէքթօյ. 8.80—9.30 ֆրանք  
Արապա, լիպրա 55—60 հէքթօյ. 9—11.20 ֆրանք

#### ԱՐՐԱ

Լիպրա 42—50 հէքթօյ. 6.10—6.40 ֆրանք

#### ՄԻՍԻՐ

Վակօն. 55—57 լիպրա, 6—6.05  
Առապա, 55—60 լիպրա, 6—6.20  
Կրէնկէ 15—20 վակօն, 25—30 առապա կէլմէքաէ տիր:

#### ՏԱՐԸ

Կրէնկէ 1/2 արապա կէլմէքաէ տիր. 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք  
Առապա մուսթիլէսի նաբօլէոն 21 ֆրանք հիսապը իւէ տիր:

#### ԲԱՉՄԱՎԷՊ

#### Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

57րդ Տարի

Տարեկան գին 10 ֆր. — 4 բուպլի. — 2 Տուր:

Հասցէ՝ Բէաքաքիոն աը լա ոըվիւ Բագմովէպ. Ս. Լազար:

Վընիկ (Իթալի)

#### ՄԵԼԻՍԵՆԵԿ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Պատմութիւն Քրիստոնեական Եկեղեցոյ ԿԱԼՈՅ

Տպարան «Անի» 1898

Գին 3.50 ֆրանք

Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պալենց գրատան և Փօքչան (Ռումանիա) Վ. Մամիկոնեանի մօտ:

### ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնել կօշիկներ որոնք իրենց վրայ միացուեն ձեռի և գիմացկունութեան կատարելութիւն և մանաւանդ գինի չափաւորութիւն, առանց վարանելու գիմացք Ստեփան Խորասանճեանի, Մուսալա, բազմիք փողոց, հաճի Հասան էֆէնիօթիլին տակ, հաւատացէք թէ առիթէն պիտի օգտուիք:



Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.